ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստ

ք. Երևան 28 նոյեմբերի 2018թ. Ժամը 10:30

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Արչունց

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Թ. Զաքարյան Շ. Հարությունյան, Հ. Մելիքյան, Ա. Իսկանդարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի (Դիմում-հայտարարություն) առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
5. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

2.1 էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտերը ներկայացվել են էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով՝ մինչև նոյեմբերի 26-ը, ժամը 10:00-ն: էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է նոյեմբերի 28-ին, ժամը 10:00-ին: Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ են ներկայացրել «Հայաուդիտ» ՍՊԸ և «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ մասնակիցները:

3.Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի (Դիմում-հայտարարություն) առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթուղթը՝ Դիմում-հայտարարություն, որը կազմվել և ներկայացվել է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան: «Հայաուդիտ» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12)-րդ ենթակետի խախտմամբ: Մասնավորապես «Հայաուդիտ» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված Դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

4.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

4.1 ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից հայտարարված *Ֆինանսական աուդիտի ծառայությունների* գնման ընթացակարգը բաղկացած է 1 չափաբաժնից: Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները՝

			ԳՆԱՌԱՋԱՐԿՆԵՐ			ՀՀ դրամ		
N	Մասնակիցներ	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«Հայաուդիտ» ՍՊԸ	1 200 000	1 200 000	240 000	1 440 000	1 088 000	217 600	1 305 600
2	«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ	1 200 000	1 730 000	346 000	2 076 000	1 730 000	130 000	2 076 000

Քանի որ էլեկտրոնային աճուրդն ամփոփվելու պահին մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության համար գնման հայտով սահմանված գինը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 18-րդ կետի և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

5.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Արչունց

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Թ. Զաքարյան

_____ Շ. Հարությունյան

_____ Հ. Մելիքյան

_____ Ա. Իսկանդարյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Բաղդասարյան